յաճախել զվիշտս բնակչաց։ Իսկ Վեսպասիանոս ասպատակաւ շրջէր յաշխարհն Եղոմայեցւոց (68)։ և կացուցանէր զօրսն յամուրս եւ դառնայր 'ի Կեսարիա։ Այն ինչ կամէր ամենայն զօրութեամբ խաղալ 'ի վերայ Երուսաղէմի, եհաս զրոյց թէ Ներոն ընկեցաւ, և Գալբա ա՛ռ զթագն։ յայն սակս յամեցոյց զարշաւանն՝ տեսանել զկատարած իրացն։ Սպանաւ և Գալբա և անց Ոթոն (69)։ Յետ մահուն Ոթոնի ինքն Վեսպասիանոս ընտրեցաւ Կայսր յԱստրիս յարեւելեան Լէգէոնացն, և թողեալ զզօրն 'ի ձեռն որդւոյ իւրոյ Տիտոսի՝ մեկնեցաւ 'ի Հռոմ։

Ընդ այն ժամանակս յԵրուսաղէմ եղեալար ոմն 'ի քահանայական տոհմէ՝ կացեալ գլխաւոր դնդի իմիք 2400 Նախանձայուզացն, գրաւեալ կալաւ զներքին սրահ քահանայիցն 'ի Տաճարին և զՅովհաննէս Գիսկալացի արգել 'ի սրահի ժողովրդեանն։ Եւ ոա 6000 արամբք անդէն լինէր նմա դիմակալ, և սակս յարձակէր 'ի վերայ քաղաքին, զոր գրաւեալ ունէր Սիմոն 1000 Նախանձայուզօքն և 5000 Եղոմայեցւովք։ Յովհաննէս Գիսկալացի այրէր զամենայն որ ինչ 'ի բուռն գայր, որով և բազում մթերք ցորենոյ, որ բաւական էին ամաց բազմաց՝ այրեցան։ Մինչդեռ յայսպիսի վիշտս էր Երուսաղէմ 'ի ժամանակին, Տիտոս գայր մերձենայր 'ի պարիսպն (70)։ Զորք Հռոմայեցի լէգէոնք էին նորա իբրեւ 7000 այրուձի և 5000 ընտիր ընտիր զօրաց, և բազմամբոխ դունդ օգնական յԱգրիպպայ եւ յայլոց իշխանացն Ասիացւոց, որովք սկսաւ պաշարել զքաղաքն Երուսաղէմացւոց, որ չինեալ էր 'ի վերայ Սկրայ բլրոյն, փակեալ ուրեք ուրեք անդնդովք, ուրեք ուրեք երեքկին պատուարաւ, և բազում ամուր ամուր աշտարակօք՝ յորոց երեւելի էին երեքինս՝ Հիպպիկոս, Փասայել, և Մարիամնէ։ Տաճարն 'ի Մորիա բլրին էր միւս եւս առանձին գրեթէ անառիկ իմն բերդ։ Իսկ ամբոխ ժողովրդեանն՝ որ 'ի ընդ բազում էր յոյժ, առաւել եւս ստուարացեալ վասն մօտաւոր Պասեքա տօնին, որպիսի բազմութիւն չէր լեալ յառաջն երբէք։ Տեսեալ տոհմակից հակառակորդաց զզօրն Հռովմայեցի, սթափեցան և միաբանեցին ընդդէմ հասարակաց թշնամւոյն։ սակայն չէր տեւական խաղաղութիւնն։ Յովհաննէս 'ի ժամանակի տօնին,